

ԵԱՏՄ դերը հետխորհրդային տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացներում

Քերյան Գարիկ Մ.

Երևանի պետական համալսարան, միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, քաղաքական գիտությունների դոկտոր, քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր (Երևան, ՀՀ)
garik_keryan@mail.ru

Կոստանյան Նվեր Ս.

Երևանի պետական համալսարան, միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, քաղաքագիտության մագիստրանտ (Հրազդան, ՀՀ)
nkostanyan2000@gmail.com

ՀՏԳ՝ 327.7; EDN: NHQPKO

Հանգուցաբառեր՝ ինտեգրացիա, ԽՍՀՄ, հետխորհրդային տարածաշրջան, ԵԱՏՄ, արտատարածաշրջանային համագործակցություն, ազատ տնտեսական գոտի, եվրասիական ինքնություն:

Роль ЕАЭС в интеграционных процессах постсоветского пространства

Керян Гарик М.

Ереванский государственный университет, факультет международных отношений, доктор политических наук, профессор кафедры политических наук (Ереван, РА)
garik_keryan@mail.ru

Костанян Нвер С.

Ереванский государственный университет, факультет международных отношений, магистр политических наук (Раздан, РА)
nkostanyan2000@gmail.com

Аннотация. Статья посвящена оценке реинтеграционного потенциала Евразийского экономического союза на постсоветском пространстве на основе основных политических результатов, зафиксированных Союзом с момента его создания, и их анализа. Конечная цель статьи – выяснить, достиг ли Евразийский экономический союз как единый экономический и политический союз достаточных результатов, чтобы претендовать на роль пионера в процессах полноценной интеграции евразийского региона в целом и постсоветского пространства региона в частности. Для достижения цели были определены следующие задачи: проанализировать основные достижения и упущения, зафиксированные в результате его деятельности с момента создания ЕАЭС, описать процесс формирования евразийской идентичности. Представить возможности ЕАЭС в контексте современных геополитических и регионально-политических процессов в Евразии, в том числе на постсоветском пространстве, с точки зрения формирования интеграционных процессов и их реализации. Выделить возможности и особенности ЕАЭС с точки зрения построения и развития отношений с геополитическими внерегиональными государствами и международными организациями.

Ключевые слова: интеграция, СССР, постсоветский регион, ЕАЭС, внерегиональное сотрудничество, свободная экономическая зона, евразийская идентичность

The role of the EAEU in the integration processes of the post-Soviet region

Keryan Garik M.

Yerevan State University, Faculty of International Relations, Doctor of Political Science, Professor of the Department of Political Science (Yerevan, RA)
garik_keryan@mail.ru

Kostanyan Nver S.

Yerevan State University, Faculty of International Relations, Master of Political Science (Hrazdan, RA)
nkostanyan2000@gmail.com

Abstract. The article is devoted to the assessment of the reintegration potential of the Eurasian Economic Union in the post-Soviet space on the basis of the main political results recorded by the Union since its inception, and their analysis. The ultimate goal of the article is to find out whether the Eurasian Economic Union as a single economic and political union has achieved sufficient results to claim the role of a pioneer in the processes of full integration of the Eurasian region as a whole and the post-Soviet region in particular. To achieve the goal, the following tasks were identified: to analyze the main achievements and omissions recorded as a result of its activities since the creation of the EAEU, to describe the process of formation of the Eurasian identity. Present the possibilities of the EAEU in the context of

modern geopolitical and regional political processes in Eurasia, including in the post-Soviet space, in terms of the formation of integration processes and their implementation. Highlight the possibilities and features of the EAEU in terms of building and developing relations with geopolitical non-regional states and international organizations.

Keywords: integration, USSR, post-Soviet region, EAEU, non-regional cooperation, free economic zone, Eurasian identity

Ներածություն. Հոդվածը Եվրասիական Տնտեսական Միության ունեցած՝ հետխորհրդային տարածաշրջանում վերաինտեգրացիոն պոտենցյալի գնահատման մասին է՝ հիմնված միության ստեղծումից ի վեր նրա գրանցած հիմնական քաղաքական արդյունքների և դրանց վերլուծության վրա: Հոդվածի վերջնականատակն է պարզել, արդյոք ԵԱՏՄ-ն որպես մեկ միասնական տնտեսաքաղաքական միություն գրանցել է բավարար արդյունքներ, որպեսզի հավակնի Եվրասիական տարածաշրջանի՝ ընդհանրապես, և հետխորհրդային տարածաշրջանի՝ մասնավորապես, լիարժեք ինտեգրացման գործընթացներում առաջամարտիկի դերին: Նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները: Վերլուծել ԵԱՏՄ ստեղծումից ի վեր դրա գործունեության արդյունքում գրանցած հիմնական ձեռքբերումները և բացթողումները, այս համատեքստում նկարագրել Եվրասիական ինքնության ձևավորման գործընթացը: Ներկայացնել ԵԱՏՄ կարողությունները արդի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային-քաղաքական զարգացումների խորապատկերում Եվրասիական՝ այդ թվում հետխորհրդային տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացներ գեներացնելու և դրանք կյանքի կոչելու տեսանկյունից: Վեր հանել ԵԱՏՄ կարողությունները և առանձնահատկությունները աշխարհաքաղաքական արտատարածաշրջանային պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների կառուցման և զարգացման տեսանկյունից:

Վերլուծություն. ԻՍՀՄ փլուզումը 20-րդ դարավերջի կարևորագույն աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող իրադարձություններից մեկն էր, որը լուրջ հետևանքներ ունեցավ ոչ միայն գլոբալ մակարդակում, այլև ամբողջապես փոխեց շուրջ 7 տասնամյակ բուն Եվրասիական տարածաշրջանում գոյություն ունեցած տարածաշրջանային միջազգային կառավարման կուռ մեխանիզմը, որը միավորում էր 15 պետական միավորների: Իրադարձությունն այս հանգեցրեց նախկին ԻՍՀՄ տարածքում 15 անկախ պետությունների ձևավորմանը, ինչն էլ իր հերթին անխուսափելիորեն պետք է հանգեցնեք հանրային կյանքի տարբեր ոլորտներում նորանկախ պետությունների համագործակցության նոր մեխանիզմների սահմանման անհրաժեշտությանը, որոնք կհամապատասխանեն ին տվյալ պատմական փուլի

աշխարհաքաղաքական իրողություններին: Նորանկախ պետությունների միջև տարածաշրջանային ամուր կապերի ձևավորման վրա հսկայական ներգործություն են ունեցել ԻՍՀՄ-ում երբևէ գոյատևած և այնտեղ գործած քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ կուռ և միացյալ մեխանիզմները: Նոր անկախություն ստացած պետությունները, բախվելով մի շարք դժվար լուծելի խնդիրների՝ կապված սեփական տնտեսության աճի, սոցիալական իրավիճակի, նոր տնտեսակարգի՝ ազատ շուկայական հարաբերությունների անցման, նախկին խորհրդային պետությունների պետական համակարգի սահմանման, ինչպես նաև համաշխարհային հարթակում ընթացող գլոբալացման ակտիվ գործընթացների հետ համընթաց քայլերու հրամայականի հետ, պետք է իրենց տեղը սահմանեն ին համաշխարհային հանրության մեջ: Այս համատեքստում հարկ ենք համարում շեշտել, որ Եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն և տարածաշրջանային միջազգային նոր մեխանիզմների առաջացման հարցում առանձնահատուկ յուրահատկություններից մեկը պատմականորեն ձևավորված ամուր կապերն են հանրությանի և պետությունների միջև, Եվրասիական տարածաշրջանի երկրների միացյալ պատմական անցյալով, մշակութային, սոցիալական, կրթական, լեզվական և այլ բնագավառների ամբողջությամբ [6, էջեր 64-70]: Այս առումով հարկ է նշել, որ տարածաշրջանում ի հայտ եկած նորանկախ պետությունները հնուց կապված են բազմաշերտ և սերտ կապերով տնտեսական, մշակութային, քաղաքակրթական ոլորտներում: Բազում տարիների ընթացքում նրանց տնտեսությունները զարգացել են որպես մեկ միասնական տնտեսական համալիր, ինչն ապահովում էր տեխնոլոգիական տարածաշրջանի հարաբերական միատարրությունը, հիմք դնում արտադրական համագործակցությանը: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն համաշխարհային և այլ տարածաշրջաններում ռեզիդենսիայի տեմպերի, հետխորհրդային տարածաշրջանում այս գործընթացը ընթանում է զգալիորեն արագ, քանզի, ինչպես վերևում նշեցինք տարածաշրջանում իրականում պահպանվել է խորհրդային ընդհանուր անցյալի իներցիան, իսկ միացյալ տնտեսական համալիրի գոյությունն իր հետքն է թողել: Հետխորհրդային տարածաշրջանում ներկայումս գործում են մի շարք բազմաբնույթ միջազգային և տարածա-

շրջանային կազմակերպություններ, ինչպիսիք են՝ ԱՊՀ, ՀԱԳԿ, Շանհայյան համագործակցության կազմակերպություն, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն, ԲՌԻԶՍ և այլն, սակայն տնտեսական հիմնական դերակատարությունը տարածաշրջանում ստանձնած կազմակերպությունը Եվրասիական տնտեսական միությունն է՝ ԵԱՏՄ-ն, որի գործունեության հիմնական ուղղություններին, արդի ժամանակահատվածում առկա ձեռքբերումներին և մարտահրավերներին էլ կփորձենք անդրադառնալ այս հոդվածում: Եվրասիական տնտեսական միությունը տնտեսական ինտեգրման միջազգային տարածաշրջանային կառավարման մեխանիզմ ենթադրող կազմակերպություն է՝ օժտված միջազգային իրավասուբյեկտությամբ և հիմնադրված Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրով, որը ստորագրվել է 2014 թվականի մայիսի 29-ին Աստանայում [1]: ԵԱՏՄ-ն հետխորհրդային տարածաշրջանում տնտեսական միություն ստեղծելու առաջին փորձը չէր բնավ, դեռևս 1990 թ. Ղազախստանի նախաձեռնությամբ մի շարք կենտրոնասիական երկրներ համաձայնել էին տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության նոր հարթակ ստեղծելու մասին, ինչն էլ կարող ենք համարել միության առաջին նախատիպը կամ նախագաղափարը: «Եվրասիական Միություն» եզրը առաջին անգամ ձևակերպվել է 1994 թ-ին՝ Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի կողմից առաջ քաշված գաղափարի հիման վրա կարճ ժամանակ անց կազմված փաստաթղթում: 1995 թ-ին Բելառուսը, Ռուսաստանը և Ղազախստանը համաձայնության եկան միասնական մաքսային գոտի ստեղծելու մասին, ինչը, կարող ենք ասել, դարձավ հետագա միության կարևորագույն շարժիչ ուժերից մեկը: 2000 թ-ին ՌԴ նախագահ Վլ. Պուտինը հանդես եկավ մաքսային միասնական գոտին համալիր և ամբողջական միջպետական տնտեսական միության վերածելու նախաձեռնությամբ, միություն, որը կունենար իր կառավարման մեխանիզմները և կիրականացներ արդյունավետ գործունեություն՝ համապատասխան մարմինների և ենթամարմինների միջոցով: Այս նախաձեռնությանը հաջորդեց Բելառուսի, Ղազախստանի, ՌԴ, Ղրղզստանի և Տաջիկստանի միջև համապատասխան պայմանագրի ստորագրումը, որը կոչվում էր Եվրասիական Տնտեսական Միության պայմանագիր (Եվրագետ): ԵԱՏՄ ստեղծումը իրականացվել է երեք փուլով՝ ազատ առևտրի, մաքսային միության և միասնական տնտեսական գոտու ստեղծումով: ԵԱՏՄ հիմնադիր պետություններ ընդունված է համարել Բելառուսը, Ղա-

զախստանը ու Ռուսաստանը, քանի որ միությունը, ինչպես վերևում նշեցինք, հիմնված էր վերջիններիս կողմից ստեղծված մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա: Մաքսային միությունը սկսել է գործել 2010 թ. հունվարից, իսկ 2011 թ. դեկտեմբերին որոշում է կայացվել Միասնական տնտեսական տարածքը ձևավորող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու մասին: 2013 թ-ին Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է Մաքսային միություն մտնելու, այդ նպատակներով անհրաժեշտ գործնական քայլեր ձեռնարկելու, իսկ այնուհետև՝ Եվրասիական տնտեսական միության կազմավորմանը մասնակցելու որոշման մասին [2]: 2014 թ. մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական խորհրդի բարձրագույն նիստում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրների նախագահները ստորագրել են Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 2015 թվ. հունվարի 1-ից: Սա նշանակում էր անցում ավելի խորը ինտեգրացիայի մակարդակ: 2014 թ. դեկտեմբերի 23-ին Մոսկվայում ԵԱՏՄ պայմանագրին է միանում Ղրղզական Հանրապետությունը: Պայմանագիրը վավերացվում է 2015 թվ. օգոստոսի 12-ին, որով Ղրղստանը դառնում է ԵԱՏՄ 5-րդ անդամ պետությունը: ԵԱՏՄ կազմակերպչական կառուցվածքը ամրագրված է պայմանագրի 8-րդ հոդվածով, ըստ որի՝ միության բարձրագույն մարմինը Բարձրագույն Եվրասիական Տնտեսական Խորհուրդն է, որի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների ղեկավարները: Եվրասիական միջկառավարական տնտեսական խորհուրդը մարմին է, որի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները: Միության մշտական գործող վերագրային կարգավորող մարմինը Եվրասիական տնտեսական հանձնաժողովն է, որը ձևավորում են Հանձնաժողովի խորհուրդն ու Հանձնաժողովի կոլեգիան: Միության Կոլեգիան հանդիսանում է Հանձնաժողովի կատարող մարմին և իրականացնում է նրա դեպարտամենտների ղեկավարումը: ԵԱՏՄ դատարանը միության դատական մարմինն է, որն ապահովում է անդամ-երկրների և միության մարմինների կողմից ԵԱՏՄ պայմանագրի և այլ միջազգային պայմանագրերի կիրառումը միության շրջանակներում: Նախագահությունը Բարձրագույն խորհրդում, Միջկառավարական խորհրդում և Հանձնաժողովի խորհրդում իրականացվում է ռոտացիոն սկզբունքով՝ ռուսերեն այբբենական կարգով, մեկ անդամ պետության կողմից օրացուցային մեկ տարվա ընթացքում՝ առանց երկարաձգման իրավունքի: ԵԱՏՄ հիմնական նպատակները թվարկված են պայմանագրի 4-րդ հոդվածում, այն է՝ անդամ

պետությունների տնտեսական զարգացման պայմանների ստեղծում՝ բնակչության կենսապայմանների բարձրացման նպատակով, միասնական շուկայի ձևավորման ձգտում, բազմակողմանի մոդեռնիզացիա, կոոպերացիա և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացում գլոբալ տնտեսության պայմաններում: Միավորումը պնդում է, որ իր նպատակն է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, համագործակցության, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված կայուն զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով: Միասնական տնտեսական տարածքը անդամ երկրներին հնարավորություն է ընձեռում համակարգել տնտեսական քաղաքականությունն առանցքային բնագավառներում: Դրա ձևավորման հիմնական բաղադրիչներից մեկը ներքին շուկայի գործունեությունն է, որի շրջանակներում անդամ-երկրների ապրանքների փոխադարձ առևտրում չեն կիրառվում ներմուծման և արտահանման մաքսատուրքեր, ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանական, հակագնացման ու փոխհատուցման միջոցներ: ԵԱՏՄ-ում իրականացվում է մակրոտնտեսական համաձայնեցված քաղաքականություն, որի վարման հիմնական ուղղություններն են. միության անդամերկրների տնտեսությունների գործունեության նույնական սկզբունքների ձևավորումը, տնտեսությունների արդյունավետ փոխգործակցության ապահովումը, ինչպես նաև կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման տեսության համար միասնական սկզբունքների և ուղղությունների մշակումը [3]:

ԵԱՏՄ-ում համագործակցությունը տարածաշրջանային միջազգային կառավարման յուրահատուկ մեխանիզմ է, որը ընդգրկում է անդամ պետությունների փոխգործակցության գրեթե բոլոր հիմնական ոլորտները, բացառությամբ՝ ռազմական և քաղաքական ոլորտի: Մեր համոզմամբ, սակայն, սխալ կլինի պնդել, թե ԵԱՏՄ-ն զուտ տնտեսական միություն է՝ զուրկ աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական որոշակի հավակնություններից: Ասվածի վառ վկայությունը ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարներից հատկապես Բելառուսի նախագահ Ալ. Լուկաշենկոյի և Ռուսաստանի նախագահ Վլ. Պուտինի կողմից բազմից հրապարակային արված մի շարք հայտարարություններն են, ըստ որոնց՝ միությունը իրենից ներկայացնում է ուժային նոր կենտրոն, որը կարող է լրացուցիչ ներդրում ունենալ աշխարհի բազմաբևեռայնության զարգացման գործում [4]: ԵԱՏՄ գրանցած հաջողության առարկայական ապացույցն է նաև այն, որ մի շարք երրորդ

պետություններ, ինչպիսիք են՝ Հնդկաստանը, Չինաստանը, Վիետնամը, Մինգապուրը, Իրանը (վերջին երկուսի և ԵԱՏՄ-ի միջև համագործակցության խթանումը տեղի է ունեցել Հայաստանի ակտիվ մասնակցությամբ [5], ակտիվորեն հետաքրքրված են տարբեր ոլորտներում Միության հետ համագործակցության ակտիվացմամբ, ինչը վկայում է Միության հետագա ընդլայնման բավականին առարկայական հնարավորությունների մասին, ինչը իր հերթին խոսում փաստ է առ այն, որ Միության գրանցած հաջողությունները բավականին դրական միջավայր են ստեղծել Միության արտաքին գրավության բարձրացման հարցում [7]: Կառույցի, վերջինիս արձանագրած արդյունքների և առհասարակ դրա արդյունավետության վերաբերյալ գնահատականներ անելիս հարկ է նշել, որ կառույցը իր բնույթով, շատ տեսաբանների կարծիքով, ավելի շատ համեմատելի է փոքր ծավալների տնտեսական կազմակերպությունների և ոչ թե ԵՄ հետ, ինչպես ձգտում են ցույց տալ կառույցի ղեկավարները [8]: Այսպես, կառույցի ուժեղ և թույլ կողմերը նշելիս կարծում ենք, որ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ կառույցը դեռևս նոր է, և իր զարգացման շրջանում հնարավոր է, որ դեռ չի իրացրել իր ող պոտենցյալը: Հիմնադրման պահից մինչև 2016 թ. ընկած ժամանակահատվածում արագ տնտեսական աճին հաջորդեցին որոշակի տնտեսական լճացման երևույթներ, ինչը բնականաբար բացասական ազդեց միության անդամ պետությունների տնտեսական կարողությունների վրա, սակայն սա չբերեց նրան, որ միության կառույցների աշխատունակությունը և միասնական մաքսային տարածքի գործունակությունը տապալվեն, ինչը բնականաբար խոսում է միության ճկունության և դիմակայունության հնարավորության մասին: Կառույցի թույլ կողմերից է միության անդամ պետությունների միջև տնտեսական ամուր բազմակողմ հարաբերությունների թերզարգացած լինելը: Անդամ պետությունները հիմնականում հարաբերություններ պահպանում են ՌԴ հետ, ինչը հանգեցնում է ՌԴ դերի գերաբեկորմանը, ինչը բնականաբար բացասական կարող է ազդեց միության՝ որպես ինտեգրացիոն կառույցի դիվերսիֆիկացված գործունեության վրա [9, էջեր 4-8] Ռուսաստանի դերի գերկենտրոնացվածությունը կարելի է ներկայացնել նաև կառույցի ռեսուրսների և այլ հատկությունների մասը դիտարկելիս, ինչը ևս միության բացասական կողմերից է [10]: Միության գրանցած առաջին մեծ ձեռքբերումը այն էր, որ հատկապես 1990-2000-ականներին հետխորհրդային և Եվրասիական տարածաշրջանում նոր ինտեգրացիոն միության ստեղծման բազմաթիվ «կեղծ մեկնարկներից» և անհաջող փորձերից

հետո (մասնավորապես՝ 1995 թվականի Մաքսային միություն և 2003 թվականի Միասնական տնտեսական տարածքի գաղափարը), 2015-ից ԵԱՏՄ-ն արդեն գործող և կուռ կազմակերպական կառույցներ ունեցող սուբյեկտ է, թեև նմանատիպ այլ միությունների (օր.՝ ԵՄ) հետ համեմատության մեջ վերցրած՝ միությունը դեռևս չի հասել մեծ արդյունքների այս առումով: Միության գրանցած հաջողություններից է նաև ԵԱՏՄ անդամ բոլոր պետություններում եվրասիական ինքնության արմատավորման դրական դինամիկան, ինչի ապացույցն է անդամ պետություններում իրականացված հանրային կարծիքի գնահատման հարցումների տվյալները, ըստ որի՝ բացի Հայաստանից բոլոր անդամ պետություններում հանրության ճնշող մեծամասնությունը (63-86%, Հայաստանում՝ 43%) ողջունել է այդ պետությունների ակտիվ ներգրավվածությունը միության գործունեության մեջ: Հայաստանում ԵԱՏՄ նման ցածր վարկանիշը կապվում է 2016-ից սկսած՝ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների հետ [8, էջեր 60-62]: Եվրասիական ինքնության ձևավորումն իր սկզբնական փուլում է: Դրա կայուն զարգացման մեծ խոչընդոտներից է անդամ պետությունների, ինչպես նաև դրանից դուրս սահմաններում ռուսաֆոբիայի մեծ ծավալները: ԵԱՏՄ-ն իր ներքին կառուցվածքային ինստիտուտները ուղղակիորեն կրկնօրինակել է ԵՄ-ից, ինչը արդյունավետ չէ՝ հաշվի առնելով այս երկու կառույցների սկզբունքային և բովանդակային տարբերությունները: ԵԱՏՄ անդամ պետություններից Ղազախստանն ու Բելառուսը անկախությունից ի վեր ամբողջությամբ չեն անցել ազատ շուկայական և կապիտալիստական համակարգերի, ինչը այս առումով լոկոմոտիվի ամբողջ դերը դնում է ՌԴ վրա, որը շատ հաճախ չի կարողանում ամբողջությամբ իրականացնել այդ դերը իր տնտեսության ոչ բավարար դիվերսիֆիկացված լինելու պատճառով: ԵԱՏՄ-ն առանձնանում է հետխորհրդային տարածքում այլ ինտեգրացիոն խմբերից արտաքին հարաբերություններ ստեղծելու իր կարողություններով: ԵԱՏՄ-ի ինտեգրացիոն հայեցակարգն ինքնին վերաբերում է ոչ միայն ներքին ասպեկտներին, այլև կարող է ունենալ արտաքին ռազմավարության ձև: ԵԱՏՄ հիմքում ընկած ռազմավարություններից առանցքայինը հենց կառույցի միջազգայնացման նպատակն է: Դեռևս 2011-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը պատրաստակամություն է հայտնել ԵԱՏՄ ընդունել ԱՊՀ անդամ երկրներին՝ հայտարարելով, որ միությունը բաց նախագիծ է: Եվրասիայում Չինաստանի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի միջև այսպես կոչված «Նոր մեծ խաղի» լույսի ներքո ԵԱՏՄ-ն դարձել է կարևորագույն

ինտեգրացիոն խմբերից մեկը, որ ձգտում է ազդեցության գոտիների մեծացման՝ այս տարածաշրջանում: ԵԱՏՄ-ն հանձին ՌԴ-ի փորձում է ընդլայնել իր ազդեցությունը ոչ միայն Չինաստանի՝ ներառյալ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության (BRI), այլև Վիետնամի, Իրանի, Սինգապուրի, Սերբիայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Եգիպտոսի, Իսրայելի, Կամբոջայի կամ Չիլիի նկատմամբ: Առանձնահատուկ են ԵԱՏՄ հարաբերությունները նաև միջազգային տասնյակից ավելի կառույցների հետ հարաբերությունների ձևաչափում: Կառույցի նման բազմավեկտոր ռազմավարությունն ընկալվում է որպես Եվրասիայում Չինաստանի ազդեցությունը վերահսկողության տակ պահելու միջոց [10, էջեր 119-126]: Թեև ի սկզբանե նախատեսված էր, որ ԵԱՏՄ-ն պետք է «կամրջի» դեր կատարի Եվրոպայի և դինամիկ փոփոխվող Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջև, սակայն ԵԱՏՄ ստեղծման սկզբնական տարիներին՝ 2013-14 թթ., ռուս-ուկրաինական հակամարտության սրմամբ պայմանավորված լարվեցին քաղաքական և տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի հետ՝ ըստ էության հենց սկզբից արգելակելով կառույցի կողմից «կամրջի դերի» ստանձնումը [6, էջեր 70-72]: ԵԱՏՄ-ն արտաքին ռազմավարության մեջ օգտագործում է ինստիտուցիոնալ արտաքին ազդեցության տարբեր գործիքներ, ինչպիսիք են՝ տնտեսական և առևտրային համագործակցության մասին արտոնյալ համաձայնագրերը (Չինաստանի հետ), ազատ առևտրի համաձայնագրեր (Վիետնամի, Իրանի, Սինգապուրի և Սերբիայի հետ), դիտորդի կարգավիճակի տրամադրում (Մոլդովային), փոխըմբռնման հուշագրեր (Բանգլադեշ, Կամբոջա, Չիլի, ԱՊՀ, ԵՄ ստանդարտացման կոմիտե և Սինգապուր) և համագործակցության հուշագրեր (Կուբա, Էկվադոր, Ինդոնեզիա, Հորդանան, Մոնղոլիա, Մարոկկո, Պերու, Հարավային Կորեա և Թաիլանդ): ԵԱՏՄ հետ համագործակցության պատրաստակամություն հայտնած երրորդ երկրների քաղաքական ռեժիմների դիտարկումը ցույց է տալիս, որ, ըստ Freedom House-ի «Ազատությունն աշխարհում 2019» զեկույցի՝ 21 հնարավոր արտաքին գործընկերներից 15-ը ճանաչվել են որպես ոչ լիովին ժողովրդավարական ռեժիմներ: Քաղաքական ռեժիմների այսպիսի նմանությունները մի կողմից բնորոշ են տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների քաղաքական բաղադրիչի խորացմանը՝ խոչընդոտների բացակայությամբ պայմանավորված, բայց մյուս կողմից, նման տեսականը կարող է խանգարել կազմակերպության ներսում ժողովրդավարացման գործընթացների զարգացմանը և նոր կապերի ձևավորմանը ժողովրդավարական

վարչակարգեր ունեցող պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Եզրակացություն. ԵԱՏՄ-ն դեռևս չի հասել սկզբնական փուլում իր առջև դրված նպատակների գոնե թե մեծ մասին, ինչը վերջինիս գործունեության արդյունավետության գնահատման տեսանկյունից թույլ է տալիս պնդել, որ կառույցը թեև հսկայական պոտենցյալի առկայությունը, դեռևս չի կարող հավակնել ողջ Եվրասիական տարածաշրջանի՝ այդ թվում հետխորհրդային հանրապետությունների միջև լիարժեք ինտեգրացիոն գործընթացի առաջամարտիկի դերի ստանձնմանը: ԵԱՏՄ կազմակերպական կառուցվածքի և դրա սկզբնավորման տեսանկյունից ԵԱՏՄ կազմակերպության և դրա կառուցվածքում ներկայումս գործառնող ինստիտուտների ստեղծումը ինքնին մեծ ձեռքբերում է, մի քանի չստացված մեկնարկների փորձերից հետո: Մյուս կողմից՝ ԵԱՏՄ ենթամարմինները ընդհանրապես չեն համապատասխանում կառույցի բովանդակությանը և կարողություններին և վերցված են ԵՄ-ից: Ռուսաստանի հեգեմոն դերը մի կողմից ներկայացվում է որպես առավելություն՝ կառույցում մշտական առաջնորդի առկայությամբ որոշակի կայունության հասնելու տեսանկյունից, մյուս կողմից՝ թերություն, քանի որ ստվերվում է միջպետական կապերի կարևորությունը, ինչը մեծ դեր ունի ինտեգրացիոն ցանկացած գործընթացի համար: Եվրասիական ինքնության ձևավորման տեսանկյունից սոցիոլոգիական մի շարք ուսումնասիրությունների տվյալները կարող ենք ներկայացնել որպես ուղղակի ապացույց՝ եվրասիական կայուն ինքնության ձևավորման: Այլ հեղինակներ, սակայն, պնդում են, որ եվրասիական ինքնության ձևավորման որոշակի մակարդակ այնուամենայնիվ կա, բայց դա կապվում է ավելի շատ հետխորհրդային միասնական անցյալի, դրա բերած բարձր կենսամակարդակի հավաքական հիշողության հետ, ինչը, համադրելով տարածաշրջանի պետություններում ռուսաֆոբիայի բարձր մակարդակի հետ հարցականի տակ է դնում եվրասիական ինքնության կայունության գաղափարը: Վերլուծելով ուսումնասիրված հեղինակների աշխատություններում տեղ գտած մոտեցումները՝ կարող ենք փաստել, որ ԵԱՏՄ-ն որպես մեկ միասնական տնտեսաքաղաքական միություն դեռևս չի կարողացել իրականացնել իր առջև դրված նպատակների մեծ մասը, իրացնել այն պոտենցյալը, որը առկա է այս տարածաշրջանի պետությունների համագործակցության մեջ, այդպիսով՝ ԵԱՏՄ-ն դեռևս չունի այն կարողությունը, որպեսզի ստանձնի ողջ Եվրասիական տարածաշրջանի ինտեգրա-

ցիոն համալիրի դերը: Թեև ուսումնասիրված բոլոր հեղինակների աշխատություններում կարելի է տեսնել վերը նշված եզրակացությունը, այնուամենայնիվ եզրակացության մեջ առկա տարբերությունները գլխավորապես ստեղծված իրավիճակի հիմնապատճառների վերաբերյալ տրված տարբեր բացատրությունների մեջ են: Մեր տպավորությամբ՝ աշխատություններում մոտեցումները շատ հաճախ պայմանավորված են նաև տարատեսակ քաղաքական դիրքորոշումներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԵԱՏՄ պաշտոնական կայք, <http://www.eaeunion.org/?lang=ru#info>, հասանելի է 04.06.2022:
2. ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, ԵՏՄ, <https://www.mfa.am/hy/international-organisations/6>, հասանելի է 25.05.2022:
3. ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը, միջազգային համագործակցություն, https://www.minfin.am/hy/page/evrasiakan_tntesakan_miutyun/, հասանելի է 20.05.2022:
4. Лукашенко видит в санкциях и торговых войнах в мире шанс для экономик ЕАЭС, <https://www.belta.by/president/view/lukashenko-vidit-v-sanktsijah-i-torgovyh-vojnah-v-mire-shans-dlja-ekonomik-eaes-327722-2018/>, հասանելի է 28.05.2022:
5. Пашинян пригласил президента Ирана и премьер-министра Сингапура на заседание ВЕЭС, <https://armenpress.am/rus/news/984474/pashinyan-iih-nakhagahin-ev-singapuri-varchapetin-hravirel.html>, հասանելի է 01.06.2022:
6. **Agnieszka Konopelko, Katarzyna Czerewacz-Filipowicz**, The Strategy of the Eurasian Economic Union Extra-Regional Integration, WSEAS Transactions on Business and Economics, 2021, 18(8), էջ 67-77:
7. **Evgeny Troitskiy**, The Eurasian Economic Union at Five: Great Expectations and Hard Times, <https://www.wilsoncenter.org/blog-post/eurasian-economic-union-five-great-expectations-and-hard-times>, հասանելի է 24.05.2022:
8. **Evgeny Vinokurov**, Eurasian Economic Union: Current state and preliminary results, Russian Journal of Economics, 2017, 1(3), էջ 54-70:
9. **Felix Hett, Susanne Skzola**, The Eurasian Economic Union, Analyses and Perspectives from, Belarus, Kazakhstan, and Russia, 2015:
10. **Ksenia Kirkham**, The formation of the Eurasian Economic Union: How successful is the Russian regional hegemony?, Journal of Eurasian Studies, 2016, 7(2), էջ 111-128:

*Տճան/Հանձնվել է՝ 04.10.2022
Рецензирована/Գրախոսվել է՝ 10.10.2022
Принята/Ընդունվել է՝ 12.10.2022*